

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԲԺԻՇԿՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՅԻԱՅԻԱՅԻ ՆՊԱՏԱԿՆ Է ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Հարցազրույց Երիտասարդ բժիշկների հայկական ասոցիացիայի (ԵԲՀԱ) նախագահ,
ուրուլոգ Գևորգ Գրիգորյանի հետ

– Ինչպե՞ս հիմնվեց ասոցիացիան: Ո՞ր գաղափարի շուրջ այն համախմբեց երիտասարդ բժիշկներին:

– Երիտասարդ բժիշկների ասոցիացիա հիմնելու գաղափարը վաղուց էր ձևավորվել մեր նախաձեռնող թիմի մոտ: 2011 թվականից զանազան ուղիներով փորձում էինք համախմբել բժշկության տարբեր ոլորտների երիտասարդ մասնագետներին: Սկզբում դա իրականացվում էր **grigoryans.am** մասնագիտական ռեսուրսի միջոցով, որով փորձում էինք նոր ծրագրեր և մոտեցումներ առաջարկել, ինչից հետո, երբ երիտասարդ բժիշկներն ավելի մեծ հետաքրքրություն դրսևորեցին թիմային աշխատանքի հանդեպ, նախաձեռնող թիմն անհրաժեշտ համարեց ստեղծել մի հարթակ, որը կհամախմբի երիտասարդ, բանիմաց բժիշկ-մասնագետներին, կծառայի նրանց շահերի առաջխաղացմանը, նրանց միջև փորձի փոխանակմանը, երիտասարդ բժիշկների շրջանում առողջ բժշկական հանրություն ունենալու գաղափարի ամրապնդմանը, բարեգործական ծրագրերի իրականացմանը, գիտաժողովների կազմակերպմանը:

Մրանք են այն հիմնական նպատակները, որոնց ձգտում է հասնել պաշտոնապես 2013թ. դեկտեմբերի 17-ից գործող Երիտասարդ բժիշկների հայկական ասոցիացիան:

Ներկայում ԵԲՀԱ-ն փորձում է ուժերի ներածի չափով աջակցել երիտասարդ բժիշկներին՝ մասնագիտական գործունեության, խորհրդատվության հարցերում: Այժմ ասոցիացիան ունի բժշկության գրեթե բոլոր ուղղությունները ներկայացնող 200-ից ավելի անդամ: Իհարկե, ոչ բոլորն են ակտիվ ներգրավված ասոցիացիայի աշխատանքներին, սակայն բոլոր անդամները մեր գաղափարակիցներ են: Ասոցիացիան ունի նաև մեծ թվով համակիրներ: ԵԲՀԱ-ի կորիզը 15-20 բժիշկներից կազմված աշխատանքային թիմն է, որում ընդգրկված են ուրոլոգներ, գինեկոլոգներ, էնդոկրինոլոգներ, սեքսոլոգներ, դեղագետներ, քիթ-կոկորդ-ականջի և այլ ոլորտների մասնագետներ:

– Ինչ ծրագրեր է իրականացրել ԵԲՀԱ-ն:

– Մինչ այժմ ասոցիացիան կազմակերպել է բժշկության տարբեր ոլորտների վերաբերող չորս գիտաժողով, բժիշկ-պացիենտ հարաբերություններին նվիրված մեկ սեմինար, որը վարեց ԵԲՀԱ-ի անդամներից մեկը, ով ներկայումս աշխատում է Ավստրիայում: Իրագործվել է նաև ծերանոցներում և մանկատներում բուժօգնությունների և բուժօգնության «Օգնության ձեռք» բարեգործական նախագիծը, որի շրջանակում ԵԲՀԱ-ի անդամների անձնական և դեղագործական ընկերությունների ներդրումների շնորհիվ հայթայթվում էր դեղորայք այդ հաստատություններում գտնվող հիվանդների համար: Մի քանի անգամ ԵԲՀԱ-ն փորձել է մասնակցել դրամաշնորհային ծրագրերի, և այդ

ուղղությամբ աշխատանքները շարունակվելու են նաև հետագայում: Հուսով եմ, որ մեր ավելի ակտիվ աշխատանքը կնպաստի դրամաշնորհային ծրագրերին մասնակցությանը:

– Համագործակցություն ի՞նչ եզրեր ունի ասոցիացիան Հայաստանի բժշկական և բժշկագիտական հանրության հետ:

– Փորձի փոխանակման առումով ԵԲՀԱ-ի անդամների համագործակցությունը Հայաստանի բժշկական հանրության հետ շատ ակտիվ է: Իհարկե, ոչ բոլոր բժիշկներն են պատրաստակամ հասարակական ակտիվության հարցում, սակայն մեր ասոցիացիայի անդամներն ու համակիրներն, անկախ տարիքից, միշտ դրական են պատասխանում համագործակցության առաջարկներին:

Մեր ասոցիացիային անդամակցում են բժշկական գիտությունների թեկնածուներ, կառույցին աջակցում են մեծ թվով անվանի գիտնականներ՝ մասնավորապես, գիտական հոդվածների խմբագրման հարցերում: ԵՄՀԱ-ի անդամներն ունեն հոդվածների հրատարակման ձևով իրենց աշխատանքի արդյունքը հանրայնացնելու խնդիր, և մենք շնորհակալ ենք Հայաստանի Դեղ արտադրողների և ներմուծողների միության «Ֆարմա» հանդեսի ղեկավարությանը՝ 2014 թվականի դեկտեմբերի 19-ին ԵԲՀԱ-ի կազմակերպած, «Մետաբոլիկ սինդրոմ. XXI դարի հիմնախնդիր» խորագիրը կրող գիտաժողովի զեկուցումների հիմք դարձած հոդվածները հանդեսում տպագրելու համար:

Ցավոք, ԵԲՀԱ-ն դեռ համագործակցության եզրեր չունի պետական հատվածի հետ: Մենք շատ կուզենայինք Երևանի քաղաքապետարանի և ՀՀ առողջապահության նախարարության հետ համագործակցել ցանկացած ծրագրի շրջանակում, որը պահանջում է մարդկային ներուժ, նեղ մասնագետ բժիշկների մասնակցություն: Մեր նպատակը ուժերի ներածի չափով առողջապահության ոլորտի բարելավումն է, բարեփոխումներին սատարելը: Եթե մենք ունենանք համապատասխան գաղափար, որը չենք կարողանա իրականացնել ինքնուրույն, մենք միանշանակ կուզենանք, որ դրանով զբաղվի ավելի մեծ կամ կազմակերպված կառույց, ԵԲՀԱ-ն էլ լինի աջակցի դերում:

Ինչ վերաբերում է հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությանը, պետք է նշեմ, որ այն գնալով ընդլայնվում է. օրինակ, վերը նշված գիտաժողովի համանախագահներից մեկը Հայկական բժշկական հակաձեռնացման ասոցիացիայի նախագահն էր, ով մեզ շատ օգնեց նաև գիտաժողովի կազմակերպման և բովանդակային ապահովման հարցերում: Մենք համագործակցում ենք Հայաստանի Հակացավային և պալիատիվ օգնության ասոցիացիայի հետ, որը ԵԲՀԱ-ին շատ օգնեց կայացման

սկզբնական շրջանում: Մենք գործընկերային կապեր ենք հաստատել բժշկության տարբեր ոլորտների նեղ մասնագետների միավորող մի շարք կազմակերպությունների հետ, որոնք նույնպես աջակցում են ԵԲՀԱ-ի աշխատանքներին:

– Արտերկրում ԵԲՀԱ-ն ի գործընկերներ ունի:

– Նախ նշեմ, որ համացանցի շնորհիվ շատ հասանելի է դարձել թե՛ արտասահմանյան գրականությունը, թե՛ արտասահմանյան բժշկական ֆորումներում ինչ-որ թեմա քննարկելը: Եթե, օրինակ, մեր գիտելիքն ինչ-որ կոնկրետ դեպքի առումով չի բավարարում, կամ ավագ սերնդի հայաստանցի բժիշկների ներկայացուցիչների փորձը որևէ հիվանդության բուժման ոլորտում չի կարող ցանկալի արդյունքի հասցնել, մենք այդ բացը լրացնում ենք նման խնդիրները համացանցում գործող միջազգային բժշկական ֆորումներում քննարկելով: Կան թե՛ ռուսական, թե՛ եվրոպական, թե՛ ամերիկյան ֆորումներ, որտեղ արտասահմանացի առաջատար բժիշկները պատրաստակամությամբ պատասխանում են մեր հարցերին:

Մինչև ԵԲՀԱ-ի հիմնումը և դրանից հետո էլ մենք շատ սերտ համագործակցում ենք Ռուսաստանի երիտասարդ ուրուլոգների ասոցիացիայի հետ: Խոսքը վերաբերում է ինչպես խորհրդատվության տրամադրմանը, այնպես էլ վերապատրաստման ծրագրերին:

– Անդրադառնա՞նք բժշկական ապահովագրության թեմային: Կարո՞ղ է արդյոք պետական հիմնարկների աշխատողների սոցիալական փաթեթի ծրագրով բժշկական ապահովագրության փորձը նպաստել համատարած պարտադիր բժշկական ապահովագրության ներդրմանը: Ի՞նչ խնդիրներ կարող են ծագել այդ ասպարեզում:

– Ապահովագրական բժշկությունը առողջապահական համակարգի ապագան է, ճիշտ մեխանիզմ է, որտեղ բժիշկը և պացիենտը գումարային հարցերով միմյանց չեն առերեսվում: Այդ հարցերը հիվանդանոցի հետ լուծում է երրորդ կառույցն՝ ապահովագրական ընկերությունը՝ հաստատված բժշկական ցուցման հիման վրա:

Անձամբ ես սոցիալական փաթեթի ծրագրի շրջանակում բավականին մեծ թվով հիվանդների եմ բուժել, վիրահատություններ կատարել: Բանն այն է, որ առանց սոցիալական փաթեթի ծրագրով նախատեսված բժշկական ապահովագրության գումարի, դպրոցի ուսուցիչը, ում աշխատավարձը բարձր չէ, դժվարամատչելի վիրահատության համար չէր դիմի:

Ես կողմ եմ նաև բժշկական պարտադիր ապահովագրությանն անցնելուն այն պարագայում, երբ հիվանդը կարողանա ինքնուրույն ընտրել իր բժշկին՝ անկախ նրանից, թե որ հիվանդանոցում է նա աշխատում՝

պետական, թե մասնավոր: Մենք ունենք առողջապահական ծառայությունների մատուցող բավական մեծ մասնավոր հատված, շատ մասնագետներ, որոնք իրենց գտել են կոմերցիոն բժշկության մեջ: Ցանկալի կլիներ, որ պետությունը սոցիալաթեթի ծրագրի սպասարկման շրջանակ ներառեր նաև բոլոր ոչ պետական կլինիկաները, որովհետև ցանկացած մարդու սահմանադրական իրավունքն է իրեն ծառայություն մատուցող բժշկին ու հիվանդանոցն ընտրելը: Հնարավոր է, որ նա ընտրի մասնավոր բժշկական կենտրոնում աշխատող բժշկի:

– Ի՞նչ պետք է անել, որ նաև մասնավոր հատվածը համատարած դիմի բժշկական ապահովագրության:

– Ամեն ինչն սկսվել է մասնավոր հատվածի բժշկական ապահովագրությունից: Այն ժամանակ, երբ պետական հիմնարկների աշխատողներին սոցիալաթեթի ծրագրով առողջապահական ծառայություններ չէին մատուցվում, շատ կազմակերպություններ կային, որոնք իրենց աշխատողներին ապահովագրում էին: Դրանից է սկսվել, բայց կարծում եմ, որ դա պետք է համատարած լինի, այսինքն՝ ուսանողներն ապահովագրված լինեն բուհի կողմից, աշակերտները՝ դպրոցի կողմից, և այդպես շարունակ: Դա բերում է նրան, որ մարդու մոտ ցանկացած առողջապահական արտակարգ իրավիճակի հաղթահարումը ֆինանսավորվում է: Այդ պարագայում մարդը չի զլանա ժամանակին դիմել բժշկի, բուժզննման և կզիտակցի, որ եթե ինչ-որ տարեկան ապահովագրավճար է տալիս ապահովագրական ընկերությանը, ապա այդ գումարի բազմապատիկ արժողությամբ բուժումը նրա համար խնդիր չի լինի: Դա արդեն անհատի գիտակցելու խնդիրն է, այլ ոչ թե պետության պարտադրանքի:

– Ի՞նչ ծրագրեր է նախատեսում իրականացնել ասոցիացիան:

– Մեր ասոցիացիան սկսում է շատ ակտիվ պայքարել հղիության սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների դեմ: Ընդ որում, ԵԲՀԱ-ն մտադիր է իրականացնել ինչպես սեփական ծրագրերը, այնպես էլ կմասնակցի համապատասխան դրամաշնորհային ծրագրերի մրցույթների: Մենք ցանկանում ենք, որ հայ մարդը ձերբազատվի այն մտայնությունից, որ աղջիկ երեխան ավելի լավ է, քան տղան: Հղիության սեռով պայմանավորված արհեստական ընդհատումները շատ լուրջ վնաս են հասցնում թե՛ ծնելիությանը, թե՛ ժողովրդագրությանը՝ խախտելով տղա/աղջիկ, հետևաբար, կին/տղամարդ հարաբերակցության հաշվեկշիռը:

Չի բացառվում, որ աշնանը սկսենք իրականացնել նաև այլ ծրագրեր: